Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-877[10]-22.10.2015,03.11.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունների կարգավորման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-225-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11.1-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել,
2) 2-րդ մասում հանել «, հաշվանցումը» բառը:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 12. Կարգավորման պարտադիր վճարները վերադարձնելու կարգը**

Սույն օրենքով սահմանված կարգով սահմանված կարգավորման պարտադիր վճարի գումարից ավելի վճարված գումարները մուտքագրվում են միասնական հաշվին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ով սահմանված կարգով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Կատարված փոփոխությունները**
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: